ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզի «Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարան ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ հայոց լեզվի ուսուցչի թափուր տեղի համար շաբաթական 5 դասաժամով:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար մրցութային հանձնաժողովին պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. Հանձնաժողովի անունով դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է:
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն (Ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինգրքույկ:

Փաստաթղթերն ընդունվում են 2018թ. նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր ժամը 10.00-ից 15-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 27-ին՝ ժամը 14.00-ին Շիրակի մարզի «Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարան ՊՈԱԿ-ում, հասցե՝ Մ. Մկրտչյան 47:

Տեղեկությունների համար զանգահարել 0312 3-24-57: